ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by giz

ՀՀ պատական կառավարման ակադեմիա

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՄՈԴՈՒԼ 3.

Համայնքի ավագանու լիազորությունները՝ տեղական տուրքերի և վճարների, հանրային ծառայությունների և տեղական սոցիալական քաղաքականության ոլորտներում

Երևան, 2026

Ուսումնական մոդուլը մշակվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի կողմից՝ ԳՄՀԸ/GIZ համագործակցության շրջանակում **«Ավագանու անդամների վերապատրաստման կարիքների գնահատում և կարողությունների զարգացում»** ծրագրով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈԴՈՒԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ..... 4

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 7

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ..... 8

ՄԱՍ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ (ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ).....10

ՄԱՍ 2. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ).....24

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 31

ՆՅՈՒԹԵՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 35

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 35

ՄՈԴՈՒԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մոդուլի նպատակը	Համայնքների ավագանիների անդամների կարողությունների զարգացում
Մոդուլի խնդիրները	Տեսական և գործնական ուսուցման միջոցով զարգացնել ունկնդիրների գիտելիքները «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով տեղական տուրքերի և վճարների տեսակների սահմանման, դրանց դրույքաչափերի հաստատման, ինչպես նաև դրանց մասով արտոնությունների կիրառման գործընթացներում համայնքի ավագանուն վերապահված իրավասությունների վերաբերյալ, բարձրացնել առևտրի և ծառայությունների, կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, առողջության առաջնային պահպանման և սոցիալական աջակցության բնագավառներում ավագանու անդամի իրավունքների և պարտականությունների իմացության մակարդակը և իրազեկվածության շրջանակը, աջակցել այդ բնագավառներում համայնքային խնդիրների լուծմանը ավագանու անդամի ակտիվ ներգրավվածություն ունենալու կարողությունների կատարելագործմանը:
Մոդուլի տևողությունը	1 – 4 ժամ
Մուտքային պահանջները	Մոդուլն ուսումնասիրելուց առաջ ունկնդիրը պետք է առնվազն ընդհանրական գիտելիքներ ունենա առևտրի և ծառայությունների, կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, առողջության առաջնային պահպանման և սոցիալական աջակցության բնագավառներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների հիմնական տարրերի վերաբերյալ:
Ուսումնասիրվող թեմաները	**Թեմա 1.** Տեղական տուրքերի և վճարների տեսակների սահմանման, դրանց դրույքաչափերի հաստատման, ինչպես նաև դրանց մասով արտոնությունների կիրառման գործընթացներում համայնքի ավագանու լիազորությունները **Թեմա 2.** Առևտրի և ծառայությունների, կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի

	բնագավառներում օրենքով ավագանուն վերապահված լիազորությունները **Թեմա 3.** Առողջության առաջնային պահպանման և սոցիալական աջակցության բնագավառներում համայնքի ավագանու լիազորությունները
Մոդուլի գնահատման կարգը և միջոցները	Գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքի միջոցով: Թեստային առաջադրանքը կազմված է մոդուլի թեմաներին անդրադարձող 10 հարցից: Թեստային առաջադրանքի յուրաքանչյուր հարցի համար սահմանված է միավոր՝ ելնելով դժվարության մակարդակից և թեմային համապատասխանությունից: Թեստային առաջադրանքը համարվում է հաջողությամբ ավարտված, եթե ճիշտ պատասխանները կազմում են առաջադրանքի բոլոր հարցերի առնվազն 70%-ը:
Վերապատրաստման դասընթացից ակնկալվող արդյունքները *(գիտելիքներ, հմտություններ, կարողություններ)* Այս մոդուլը հաջողությամբ ավարտելուց հետո ունկնդիրը պետք է.	
Արդյունք 1.	*իմանա համայնքի «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» և այլ օրենքներով ավագանուն վերապահված ոլորտային հիմնական լիազորությունները*
Արդյունք 2.	*կարողանա սահմանել տեղական տուրք, տեղական վճար, սոցիալական աջակցություն, կյանքի դժվարին իրավիճակ, սոցիալական պատրոնաժ, սոցիալական աշխատանք հասկացությունները*
Արդյունք 3.	*կարողանա ակտիվ մասնակցություն ունենալ ավագանու իրավասությունը, կազմել և ավագանու, մշտական հանձնաժողովների ու խմբակցությունների նիստերի քննարկմանը ներկայացնել ըստ բնագավառների ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների իրականացման շրջանակներում որոշումների նախագծերի մշակման և ընդունման գործընթացներում*
Արդյունք 4.	*կարողանա մասնակցել համայնքում տեղական տուրքեր և վճարներ սահմանելու մասին որոշման նախագծի հանրային քննարկումներին, լսումներին և դրանք*

	ներկայացնել ավագանու քննարկմանը
Արդյունք 5.	*կարողանա պատկերացնել առևտրի և ծառայությունների, կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, առողջության առաջնային պահպանման և սոցիալական աջակցության բնագավառներում համայնքի ավագանու լիազորությունները, այդ բնագավառներում ավագանու կողմից ընդունվող որոշումների շրջանակը և հասկանալ դրանց կարևորությունը*
Մոդուլի ուսուցման մեթոդաբանությունը	*Մոդուլի ուսուցման ընթացքում, ի լրումն ներկայացված տեսական նյութի մատուցման, անհրաժեշտ է կիրառել ինտերակտիվ ուսուցման առնվազն հետևյալ եղանակները.* • *աշխատանք խմբերով,* • *անհատական առաջադրանքների կատարում,* • *ինքնակրթություն՝ լրացուցիչ նյութերի ընթերցում և դիտում:*
Մոդուլի ուսուցման համար անհրաժեշտ ռեսուրսները	• *մոդուլին և թեմայի առանձնահատկություններին տիրապետող փորձագետ* • *ուսումնական տարածք՝ կահավորված անհրաժեշտ սարքավորումներով ու նյութերով*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՀՀՀԶԾ	Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Սոցիալական աջակցություն	կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու նպատակով անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մեկ կամ մի քանի սոցիալական ծառայությունների տրամադրումն է Հայաստանի Հանրապետության և (կամ) տեղական ինքնակառավարման մարմնի կողմից
Կյանքի դժվարին իրավիճակ	հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, վնասակար սովորույթների, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու հանգամանքներից որևէ մեկով կամ դրանց համակցմամբ, մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող
Սոցիալական պատրոնաժ	հասարակական կյանքում լիարժեք գործունեության ապահովման, այդ թվում՝ աշխատանքի իրավունքի իրականացման համար անհրաժեշտ առանձնահատուկ պահանջների առկայության դեպքում սոցիալական պատրոնի (օգնականի) կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների ամբողջություն

Սոցիալական աշխատանքը	մարդու անհատական սոցիալական կարիքների բավարարման նպատակով հոգեբանական և մանկավարժական մեթոդների ու եղանակների կիրառման միջոցով իրականացվող մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է մարդու (անձամբ այն իրականացնելու անկարողության դեպքում) կյանքի դժվարին իրավիճակը հաղթահարելուն կամ կանխարգելելուն՝ մարդուն, ընտանիքին, սոցիալական այլ խմբերին անհատական օգնություն ցուցաբերելու միջոցով՝ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով
Տեղական տուրք	տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ օրենքով սահմանված գործողությունների համար համայնքի բյուջե վճարվող՝ ավագանու սահմանած պարտադիր գանձույթ
Տեղական վճար	տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների համար համայնքի բյուջե վճարվող՝ ավագանու սահմանած պարտադիր գանձույթ.

ՄԱՍ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՏԵՂԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ (ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ)

Թեմա 1. Տեղական տուրքերի և վճարների տեսակների սահմանման, դրանց դրույքաչափերի հաստատման, ինչպես նաև դրանց մասով արտոնությունների կիրառման գործընթացներում համայնքի ավագանու լիազորությունները

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՈՒՄ Է ՏԵՂԱԿԱՆ **ՀԱՐԿԵՐԻ, ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ** ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՍԱՀՄԱՆՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ **ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ** ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ:

Համայնքի ավագանին

համայնքի ղեկավարի ներկայացմամբ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների տեսակների և դրույքաչափերի շրջանակներում

սահմանում է

տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը:

Տեղական վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանվում են օրենքով, ինչպես նաև համայնքի ավագանու որոշմամբ՝

սահմանելով օրենքի տեղական վճարների տեսակների մեջ չներառված տեղական վճարների նոր տեսակներ և դրանց դրույքաչափերը:

Ավագանին

տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը հաստատում է

համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ՝

օրենքով սահմանված կարգով:

Համայնքի ավագանու որոշմամբ,

տեղական տուրքերի և վճարների գծով կարող են կիրառվել

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

****

Արտոնությունները՝ ավագանու սահմանած փաստաթղթերի և տեղեկությունների հետ միասին, համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին:

Կարևոր է հիշել, որ ...

Տեղական տուրքերի և վճարների արտոնություններ են՝

- **տեղական տուրքի և վճարի դրույքաչափի նվազեցումը ավագանու սահմանած տոկոսի չափով,**
- **տեղական տուրքի և վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառումը,**
- **հաշվարկված տեղական տուրքի և վճարի վճարումից ազատումը:**

Համայնքում տեղական տուրքերի տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանելու մասին համայնքի ավագանու որոշումը ենթակա են կատարման համայնքի վարչական տարածքում:

Կարևոր է իմանալ, որ ...

Համայնքներում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելիս ավագանին կարող է առաջնորդվել գոտիավորման սկզբունքով:

****

Համայնքի վարչական տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական տուրքերի միասնական դրույքաչափեր, բացառությամբ՝ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը գոտիավորման սկզբունքով սահմանելու դեպքի:

****

Ավագանու որոշմամբ սահմանված գոտիների համար կարող են սահմանվել տեղական տուրքերի և վճարների տարբեր դրույքաչափեր:

****

Գյուղական կամ քաղաքային բնակավայրերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային բնակավայրերի համար օրենքով կարող են սահմանվել տեղական տուրքերի դրույքաչափերի տարբեր գործակիցներ:

****

Օրացուցային տարվա համար ավագանու սահմանած տեղական տուրքի դրույքաչափերը փոփոխության չեն կարող ենթարկվել: Օրացուցային տարվա կամ եռամսյակի համար տեղական տուրքի դրույքաչափը համամասնորեն հաշվարկվում է օրենքով սահմանված թույլտվությունների տրամադրման օրվանից սկսած մինչև օրացուցային տարվա կամ եռամսյակի ավարտը:

****

Տեղական տուրքը գանձվում է նախքան օրենքով սահմանված գործողությունների կատարումը կամ թույլտվությունների տրամադրումը, կամ համայնքային ծառայությունների մատուցումը:

****

Օրենքով սահմանված և օրենքի տեղական վճարների տեսակների մեջ չներառված (համայնքի ավագանու որոշմամբ՝ տեղական վճարների նոր տեսակները և դրանց դրույքաչափերը) սահմանվող տեղական վճարների տեսակների համար համայնքի ավագանին սահմանում է փոխհատուցման վճարներ, որոնց դրույքաչափերը՝ տվյալ ծառայության համար անհրաժեշտ ծախսերի չափով են:

****

. Օրացուցային տարվա համար ավագանու սահմանած տեղական վճարների դրույքաչափերը փոփոխության չեն կարող ենթարկվել:

****

Տեղական տուրքը կամ վճարը սահմանելու վերաբերյալ համայնքի ավագանու

որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով:

Թեմա 2. Առևտրի և ծառայությունների, կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառներում օրենքով ավագանուն վերապահված լիազորությունները

Անհրաժեշտ է վերհիշել, որ ...

Համայնքի պարտադիր խնդիրներից են՝

- նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը.
- համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը.
- համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը.
- համայնքի մշակութային կյանքի կազմակերպումը.
- համայնքում մարզական կյանքի կազմակերպումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը.
- համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը.
- համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումը.
- բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

ԱՎԱԳԱՆՈՒ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

NN	ԱՎԱԳԱՆՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1.	Համայնքի ղեկավարի առաջարկությամբ հաստատում է համայնքի սեփականություն հանդիսացող տարածքներում այն վայրերի ցանկը, որտեղ թույլատրվում է վաճառքի և վարձույթի նպատակով կայանել ավտոտրանսպորտային միջոցները:
2.	Սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը:
3.	Համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում աշխատակազմի, համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ:
4.	Օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը:
5.	Սահմանում է այն շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները, որտեղ իրականացվում կամ մատուցվում են քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ:
6.	Սահմանում է համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները:
7.	Սահմանում է առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը (22.00-ից մինչև 7.00-ն, 23.00-ից մինչև 7.00-ն և 24.00-ից մինչև 7.00-ն):
8.	Որոշում է ընդունում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջների վերաբերյալ:
9.	Սահմանում է հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները:

10.	Սահմանում է շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, ժամկետները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները:
11.	Սահմանում է շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը և շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու և պահպանելու համար վճարների չափը:
12.	Կարող է սահմանել համայնքի բյուջե մուտքագրվող վճարներ համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների՝ ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջեռուցման, աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման, բազմաբնակարան շենքերի սպասարկման և օրենքով սահմանված դեպքերում այլ ծառայությունների իրականացման համար: Վճարների չափը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ:
13.	Սահմանում է շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, ժամկետները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները:
14.	Սահմանում է շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը և շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու և պահպանելու համար վճարների չափը:
15.	Ավագանին որպես տեղական վճարի տեսակ հաստատում է՝ համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում:

16.	Սահմանում է համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքները:
17.	Համայնքի ավագանու որոշմամբ ավտոկայանատեղ կազմակերպելու իրավասությունը կարող է վերապահվել նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք իրականացնում են վճարի գանձումը՝ համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրին համապատասխան:
18.	Ավտոկայանատեղը կազմակերպվում է տվյալ համայնքի ավագանու որոշմամբ, որը համաձայնեցվում է լիազոր մարմնի հետ: Եթե ավտոկայանատեղը պետք է կազմակերպվի զորամասերի, ռազմական կամ ազգային անվտանգության համակարգերի շենքերին կամ շինություններին հարակից տարածքներում, ապա ավտոկայանատեղը կարող է կազմակերպվել միայն համապատասխան մարմինների համաձայնությամբ:
19.	Համայնքի ավագանին կարող է սահմանել ավտոկայանատեղի կանխավճարային կտրոնային համակարգ:
20.	Ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը որոշում է տվյալ համայնքի ավագանին:
21.	Համայնքի ավագանին սահմանում է մշակութային գործունեության իրականացման նպատակով քաղաքային բնակավայրերի հանրային բացօթյա վայրերի (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն) օգտագործման պայմանները, պահանջները և սահմանափակումները:
22.	Համայնքի ավագանին հաստատում է համայնքի երիտասարդների կարիքից և պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարական ծրագրից բխող համայնքի երիտասարդական քաղաքականությունը:
23.	Օրինակելի կանոնադրության հիման վրա ավագանու որոշմամբ համայնքի ղեկավարը հաստատում է համայնքի կողմից ստեղծվող երիտասարդական կենտրոնի կանոնադրությունը:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Համայնքի պաշտոնական համացանցային կայքում ներբեռնման հնարավորությամբ առնվազն պետք է առկա լինի՝

- **համայնքում առկա համայնքային կառույցների (կրթական, մշակութային և այլն) վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը (բյուջե, գործունեության տեսակ, հասցե, կոնտակտային տվյալներ) և (կամ) դրանց համացանցային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում):**

- **համայնքի ՏԻՄ-երի հետ համագործակցող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ գործընկերների մասին ընդհանուր բնույթի տեղեկություններ՝ դասակարգված ըստ սոցիալական պաշտպանության, առողջապահական, կրթական, շրջակա միջավայրի պաշտպանության ու տնտեսական զարգացման ոլորտների**

****

«Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝

համայնքի ղեկավարը, ելնելով համայնքի երիտասարդների կարիքներից, ակնկալիքներից, ձգտումներից, երիտասարդների կյանքում առկա և պոտենցիալ մարտահրավերներից և հնարավորություններից, ինչպես նաև պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարական ծրագրով սահմանված առաջնահերթություններից,

ՀՀՌԾ-ում ներառում է երիտասարդական ծրագրեր, մշակում և ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի երիտասարդական քաղաքականությունը:

****

Համայնքի ղեկավարը

համայնքի երիտասարդական քաղաքականության մշակումն ու իրականացումն ապահովելու նպատակով

համայնքի աշխատակազմի աշխատողներից առնվազն մեկի գործառույթներում սահմանում է երիտասարդական աշխատողի գործառույթները կամ

համայնքի ղեկավարի հայեցողությամբ առանձնացնում երիտասարդական աշխատողի

առնվազն մեկ հաստիք:

Թեմա 3. Առողջության առաջնային պահպանման և սոցիալական աջակցության բնագավառներում համայնքի ավագանու լիազորությունները

Անհրաժեշտ է վերհիշել, որ ...

Համայնքի պարտադիր խնդիրներից են՝

- **համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը.**
- **համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի առաջնային բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:**

Առողջության առաջնային պահպանման բնագավառում

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ԵՎ ԱՅԼ ՕՐԵՆՔՆԵՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՎԱԾ ՉԵՆ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ԻՐԵՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԱՅԼ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
(ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ, ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՄ ԼՈՒԾԱՐՄԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԻԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ)
ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՈՒՂՂԱԿԻՈՐԵՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Համայնքի ղեկավարը առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների և մարզական կազմակերպությունների գործունեությունը.

2) կազմակերպում է ներհամայնքային և միջհամայնքային պարբերական զանգվածային մարզական միջոցառումներ և մրցույթներ.

3) ըստ բնակության վայրի, ինչպես նաև հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար ստեղծում է համապատասխան պայմաններ՝ Հ Հ կառավարության սահմանած կարգով.

4) նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է մարզական հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն, վերանորոգում, ստեղծում է հանգստի գոտիներ:

Համայնքի ղեկավարը առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.

1) կազմակերպում է համայնքի տարածքում արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնության և սպասարկման իրականացումը.

2) աջակցում է համայնքի տարածքում իրականացվող վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ և սանիտարահակահամաճարակային աշխատանքներին.

3) աջակցում է առողջ ապրելակերպի, ֆիզիկական ակտիվության քարոզչության և ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման և երկրորդային ծխով պայմանավորված վնասի վերաբերյալ իրականացվող իրազեկման աշխատանքներին:

Համայնքների ղեկավարները արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնության կազմակերպումը և սպասարկումը իրականացնում են՝

համայնքային ենթակայության առողջության կենտրոնների, առողջության առաջնային պահպանման կենտրոնների և գյուղական ամբուլատորիաների միջոցով:

Արտահիվանդանոցային բժշկական սպասարկման օղակի մաս են կազմում բուժակ-մանկաբարձական կետերը, որոնք գտնվում են առողջության կենտրոնների, առողջության առաջնային պահպանման կենտրոնների և գյուղական ամբուլատորիաների ենթակայության ներքո:

ԱՎԱԳԱՆՈՒ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

NN	ԱՎԱԳԱՆՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1.	Համայնքային սոցիալական ծրագիրը մշակում է համայնքի ղեկավարը, իսկ հաստատում է համայնքի ավագանին:
2.	Համայնքներում սոցիալական աջակցության ոլորտի սոցիալական ծառայությունների տրամադրման կարգը, պայմանները, շահառուների խմբերը հաստատում է համայնքի ավագանին:
3.	Սահմանում է համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

Սոցիալական աջակցության վերաբերյալ համայնքի կամավոր խնդիրները լուծելու նպատակով համայնքի կողմից կարող են՝

1) տրամադրվել «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սոցիալական ծառայությունները, բացառությամբ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում նշված նպաստների կամ այլ դրամական օգնությունների տրամադրման.

2) մշակվել «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության չսահմանած այլ սոցիալական ծառայությունների տեսակներ՝ սոցիալական աջակցության ոլորտում պետական լիազոր մարմնի գրավոր համաձայնությամբ.

3) իրականացվել կամավորների հավաքագրում, համապատասխան սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում օրենսդրությամբ սահմանված կարգով կամավորների ընդգրկում և նրանց աշխատանքի վերահսկում:

Համայնքի ղեկավարի լիազորությունները սոցիալական պաշտպանության բնագավառում

սահմանված են

«Տեղական ինքնակառավարման մասին» և «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքներով:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Համայնքի ղեկավարը սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.

1) սոցիալական պատրոնաժի տրամադրումը.

2) «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված հրատապ արձագանք պահանջող իրավիճակի հետևանքով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի) անձանց սոցիալական կարիքների նախնական գնահատումը և օրենսդրությամբ սահմանված կարգով ու դեպքերում սոցիալական աջակցության տրամադրումը:

3) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար 5000-ից ավել բնակիչ ունեցող համայնքի աշխատակազմում ստեղծվում է համայնքի սոցիալական աշխատողի հաստիք: Համայնքի սոցիալական աշխատողի, սոցիալական սատարողի ու սոցիալական պատրոնի հիմնական իրավունքներն ու պարտականությունները, գործառույթները սահմանված են, և այլ հարաբերությունները կարգավորված են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով:

****

Համայնքի ղեկավարը պաշտպանության կազմակերպման բնագավառում որպես պետության պատվիրակած լիազորություն աջակցում է զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների, հաշմանդամություն ունեցող զինծառայողների սոցիալական խնդիրների լուծմանը;

****

Համայնքի ղեկավարի կողմից սոցիալական աջակցության տրամադրումն իրականացվում է
պետական լիազոր մարմնի սահմանած սոցիալական ծառայություններին ներկայացվող նվազագույն չափորոշիչներով:

****

Համայնքային սոցիալական ծրագիրն իրականացվում է համայնքի ղեկավարի աշխատակազմի միջոցով կամ պայմանագրային հիմունքներով՝ համայնքում գործող համագործակցության ցանցի մասնակցի կամ շահագրգիռ այլ կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց կողմից:

****

Սոցիալական աշխատանքի մասնագետներն են սոցիալական աշխատողն ու սոցիալական սատարողը:

ՄԱՍ 2. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ)

Վարժություն 1. ***Երկու բազմությունների տարրերի միջև համապատասխանության հաստատում (որոնում)***

Օգտագործվող հիմնական հասկացությունները (ձախ սյունակում) գծով միացրեք համապատասխան սահմանման հետ (աջ սյունակում):

Սոցիալական աջակցություն	հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, վնասակար սովորույթների, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու հանգամանքներից որևէ մեկով կամ դրանց համակցմամբ, մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող
Կյանքի դժվարին իրավիճակ	կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու նպատակով անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մեկ կամ մի քանի սոցիալական ծառայությունների տրամադրումն է Հայաստանի Հանրապետության և (կամ) տեղական ինքնակառավարման մարմնի կողմից
Սոցիալական պատրոնաժ	մարդու անհատական սոցիալական կարիքների բավարարման նպատակով հոգեբանական և մանկավարժական մեթոդների ու եղանակների կիրառման միջոցով իրականացվող մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է մարդու (անձամբ այն իրականացնելու անկարողության դեպքում) կյանքի դժվարին իրավիճակը հաղթահարելուն կամ կանխարգելելուն՝ մարդուն, ընտանիքին, սոցիալական այլ խմբերին անհատական

	օգնություն ցուցաբերելու միջոցով՝ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով
Տեղական տուրք	տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների համար համայնքի բյուջե վճարվող՝ ավագանու սահմանած պարտադիր գանձույթ
Տեղական վճար	տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ օրենքով սահմանված գործողությունների համար համայնքի բյուջե վճարվող՝ ավագանու սահմանած պարտադիր գանձույթ
Սոցիալական աշխատանքը	հասարակական կյանքում լիարժեք գործունեության ապահովման, այդ թվում՝ աշխատանքի իրավունքի իրականացման համար անհրաժեշտ առանձնահատուկ պահանջների առկայության դեպքում սոցիալական պատրոնի (օգնականի) կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների ամբողջություն

Վարժություն 1. ***Երկու բազմությունների տարրերի միջև համապատասխանության հաստատում (որոնում).***

Օգտագործվող հիմնական հասկացությունները (ձախ սյունակում) գծով միացրեք համապատասխան սահմանման հետ (աջ սյունակում):

Սոցիալական աջակցություն	կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու նպատակով անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մեկ կամ մի քանի սոցիալական ծառայությունների տրամադրումն է Հայաստանի Հանրապետության և (կամ) տեղական ինքնակառավարման մարմնի կողմից
Կյանքի դժվարին իրավիճակ	հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, վնասակար սովորույթների, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու հանգամանքներից որևէ մեկով կամ դրանց համակցմամբ, մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող
Սոցիալական պատրոնաժ	հասարակական կյանքում լիարժեք գործունեության ապահովման, այդ թվում՝ աշխատանքի իրավունքի իրականացման համար անհրաժեշտ առանձնահատուկ պահանջների առկայության դեպքում սոցիալական պատրոնի (օգնականի) կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների ամբողջություն
Տեղական տուրք	տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ օրենքով սահմանված գործողությունների համար համայնքի

	բյուջե վճարվող՝ ավագանու սահմանած պարտադիր գանձույթ
Տեղական վճար	տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների համար համայնքի բյուջե վճարվող՝ ավագանու սահմանած պարտադիր գանձույթ
Սոցիալական աշխատանքը	մարդու անհատական սոցիալական կարիքների բավարարման նպատակով հոգեբանական և մանկավարժական մեթոդների ու եղանակների կիրառման միջոցով իրականացվող մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է մարդու (անձամբ այն իրականացնելու անկարողության դեպքում) կյանքի դժվարին իրավիճակը հաղթահարելուն կամ կանխարգելելուն՝ մարդուն, ընտանիքին, սոցիալական այլ խմբերին անհատական օգնություն ցուցաբերելու միջոցով՝ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով

Վարժություն 2. Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները

Խմբով քննարկեք և փորձեք դասակարգել ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները:

N	Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորություններ	Ավագանու լիազորությունները	Համայնքի ղեկավարի լիազորությունները
1.	Կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների և մարզական կազմակերպությունների գործունեությունը		
2.	Օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը		
3.	Հաստատում է համայնքի սեփականություն հանդիսացող տարածքներում այն վայրերի ցանկը, որտեղ թույլատրվում է վաճառքի և վարձույթի նպատակով կայանել ավտոտրանսպորտային միջոցները		
4.	Կազմակերպում է ներհամայնքային և միջհամայնքային պարբերական զանգվածային մարզական միջոցառումներ և մրցույթներ		
5.	Որոշում է ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը		
6.	Կազմակերպում է համայնքի տարածքում արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնության և սպասարկման իրականացումը		
7.	Սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը		
8.	Պաշտպանության կազմակերպման բնագավառում որպես պետության պատվիրակած լիազորություն աջակցում է զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների, հաշմանդամություն ունեցող զինծառայողների սոցիալական խնդիրների		

	լուծմանը		
9.	Ըստ բնակության վայրի, ինչպես նաև հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար ստեղծում է համապատասխան պայմաններ՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով		
10.	Սահմանում է համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները:		
11.	Համայնքներում սոցիալական աջակցության ոլորտի սոցիալական ծառայությունների տրամադրման կարգը, պայմանները, շահառուների խմբերը հաստատում է համայնքի ավագանին		
12.	Աջակցում է առողջ ապրելակերպի, ֆիզիկական ակտիվության քարոզչության և ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման և երկրորդային ծխով պայմանավորված վնասի վերաբերյալ իրականացվող իրազեկման աշխատանքներին		

Վարժություն 2. Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները

Խմբով քննարկեք և փորձեք դասակարգել ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները:

N	Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորություններ	Ավագանու լիազորությունները	Համայնքի ղեկավարի լիազորությունները
1.	Կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների և մարզական կազմակերպությունների գործունեությունը		
2.	Օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը		
3.	Հաստատում է համայնքի սեփականություն հանդիսացող տարածքներում այն վայրերի ցանկը, որտեղ թույլատրվում է վաճառքի և վարձույթի նպատակով կայանել ավտոտրանսպորտային միջոցները		
4.	Կազմակերպում է ներհամայնքային և միջհամայնքային պարբերական զանգվածային մարզական միջոցառումներ և մրցույթներ		
5.	Որոշում է ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը		
6.	Կազմակերպում է համայնքի տարածքում արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնության և սպասարկման իրականացումը		
7.	Սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը		

8.	Պաշտպանության կազմակերպման բնագավառում որպես պետության պատվիրակած լիազորություն աջակցում է զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների, հաշմանդամություն ունեցող զինծառայողների սոցիալական խնդիրների լուծմանը		
9.	Ըստ բնակության վայրի, ինչպես նաև հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար ստեղծում է համապատասխան պայմաններ՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով		
10.	Սահմանում է համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները:		
11.	Համայնքներում սոցիալական աջակցության ոլորտի սոցիալական ծառայությունների տրամադրման կարգը, պայմանները, շահառուների խմբերը հաստատում է համայնքի ավագանին		
12.	Աջակցում է առողջ ապրելակերպի, ֆիզիկական ակտիվության քարոզչության և ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման և երկրորդային ծխով պայմանավորված վնասի վերաբերյալ իրականացվող իրազեկման աշխատանքներին		

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Հարց 1. Ե՞րբ է համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը.

1) Համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց հետո՝ օրենքով սահմանված կարգով.
2) Մարզպետի աշխատակազմի հետ համաձայնեցնելուց հետո.
3) **Համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ՝ օրենքով սահմանված կարգով:**

Հարց 2. Տեղական տուրքերի և վճարների արտոնություններն են՝

1) տեղական տուրքի և վճարի դրույքաչափի նվազեցումը ավագանու սահմանած տոկոսի չափով և հաշվարկված տեղական տուրքի և վճարի վճարումից ազատումը.
2) **տեղական տուրքի և վճարի դրույքաչափի նվազեցումը ավագանու սահմանած տոկոսի չափով, տեղական տուրքի և վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառումը, հաշվարկված տեղական տուրքի և վճարի վճարումից ազատումը**.
3) տեղական տուրքի և վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառումը, հաշվարկված տեղական տուրքի և վճարի վճարումից ազատումը:

Հարց 3 Տեղական տուրքը գանձվում է՝

1) նախքան թույլտվությունների տրամադրումը.
2) նախքան օրենքով սահմանված գործողությունների կատարումը կամ թույլտվությունների տրամադրումը.
3) **նախքան օրենքով սահմանված գործողությունների կատարումը կամ թույլտվությունների տրամադրումը, կամ համայնքային ծառայությունների մատուցումը:**

Հարց 4. Օրացուցային տարվա համար ավագանու սահմանած տեղական վճարները՝

1) **փոփոխության չեն կարող ենթարկվել.**
2) կարող են փոփոխվել ավագանու որոշմամբ.
3) կարող են փոփոխվել համայնքի ղեկավարի որոշմամբ:

Հարց 5. Նշվածներից ո՞ր մարմինն է աջակցում համայնքի տարածքում իրականացվող վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ և սանիտարահակահամաճարակային աշխատանքներին՝

1) համայնքի ավագանին.
2) **համայնքի ղեկավարը.**
3) համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

Հարց 6. Համայնքի ղեկավարի կողմից սոցիալական աջակցության տրամադրումն իրականացվում է՝

1) ՀՀ Ազգային ժողովի սահմանած սոցիալական ծառայություններին ներկայացվող նվազագույն չափորոշիչներով.
2) ՀՀ կառավարության սահմանած սոցիալական ծառայություններին ներկայացվող նվազագույն չափորոշիչներով.
3) **պետական լիազոր մարմնի սահմանած սոցիալական ծառայություններին ներկայացվող նվազագույն չափորոշիչներով:**

Հարց 7. Համայնքի վարչական տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական տուրքերի միասնական դրույքաչափեր, բացառությամբ՝

1) տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը կամավորության սկզբունքով սահմանելու դեպքի.
2) տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը կամակորությամբ սահմանելու դեպքի.
3) **տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը գոտիավորման սկզբունքով սահմանելու դեպքի:**

Հարց 8. Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում ավտոկայանատեղի կանխավճարային կտրոնային համակարգ.

1) համայնքի ղեկավարը.
2) համապատասխան մարզպետը՝ համայնքի ավագանու առաջարկությամբ.
3) **համայնքի ավագանին:**

Հարց 9. Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում է համայնքի երիտասարդների կարիքից և պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարական ծրագրից բխող համայնքի երիտասարդական քաղաքականությունը.

1) **համայնքի ավագանին.**
2) պետական լիազորված մարմինը.
3) համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու համաձայնությամբ:

Հարց 10. Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները.

1) **համայնքի ավագանին.**
2) համապատասխան մարզպետը.
3) համայնքի ղեկավարը:

ՆՅՈՒԹԵՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ա. Մուրադյան, Համայնքների բյուջետավարման ուղեցույց, Համայնքների ֆինանսիստների միավորում, «Դար», Երևան, 2004 թ.

2. Ձեռնարկ համայնքի ավագանու անդամների և անդամության թեկնածուների համար, Հայաստանի ավագանիների ասոցիացիա, 2016 թ.

3. «Տեղական ինքնակառավարման հիմունքները», ուսումնական ձեռնարկ, Է. Օրդյանի ընդհանուր խմբագրությամբ, «Պետական ծառայություն», Երևան, 2002 թ.

4. Ղազարյան Է., 100 հարց և պատասխան տեղական ինքնակառավարման մասին, հեղինակային հրատարակչություն, Երևան, 2003 թ.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն
2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
3. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք
4. «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենք
5. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Համայնքի ավագանու լիազորությունները՝ տեղական տուրքերի և վճարների, հանրային ծառայությունների և տեղական սոցիալական քաղաքականության ոլորտներում

Հեղինակ՝ Ժիրայր Ղազարյան

Համակարգչային ձևավորող՝ Հասմիկ Նավասարդյան

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ